ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 6. 1954 Общественные науки

Աշոտ Հովհաննիսյան

Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՆՀԱՅՏ ՄԻ ԷՋԸ

Մ. Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտին կից թանգարանի թղթերում մենք հանդիպեցինք 1857 թ. հուլիսի 23-ին Ռ. Պատկանյանին ուղղված մի նամակի, որի գրողը՝ Ռ. Պատկանյանը՝ հաղորդելով առաջիկայում լույս տեսնելիք «Հյուսիսափայլի» մասին, ավելացնում է. «Նալբանդյանը գնաց արտասահման» ինչպես լսեցի՝ օրագրի համար մամուլ, տառեր ու գլիշներ պիտի բերե»[1].

Ստույգ հայտնի են Նալբանդյանի արտասահմանյան երկու ուղևորությունները։ Մինը նա ձեռնարկել էր 1859 թ. անցնելով Վարշավա, Բեռլին, Փարիզ, Լոնդոն և Էսսեն, մյուսը՝ 1860—1862 թվականներին՝ Հնդկաստան ուղևորվելու կապակցությամբ։ Ռ. Պատկանյանի հաղորդածը հետաքրքրական նորություն է։ Այն օգնում է մեզ պարզելու այն իրողությունը, որ 1857 թ. Նալբանդյանը կատարել է նաև ուրիշ՝ մինչև հիմա անհայտ մնացած, արտասահմանյան ուղևորություն։

Պատկանյանի հաղորդածը հավաստելու համար պիտի գիտենք նախ, որ չկա Նալբանդյանի կենսագրության հայտնի որևէ փաստ, որ հակասեր դրան։ Հայտնի են, ընդհակառակը, մի շարք փաստեր, որոնք հավանական են դարձնում Ռ. Պատկանյանի հաղորդածի ճշտությունը։

Մեր ձեռքի տակ կա «Հյուսիսափայլի» հրատարակման մասին 1857 թվականի մայիսին առանձին թերթիկով տպված «Ծանուցումը», ուր առաջին անգամ նշված է ամսագրի նպատակը և բնութագրված նրա ուղղությունը։ Նույն տարվա հունիսի 1-ին՝ Սալթիկյանին գրած մի նամակում Նալբանդյանը հաղորդում է «Հյուսիսափայլի» մասին և միաժամանակ հայտնում, թե մտադիր է առաջիկա հուլիսի կեսերին կամ վերջերին լինել Նախիջևանում[2]։ Չկա փաստ, թե Նալբանդյանը իրագործեց այդ մտադրությունը։ Մատենադարանի արխիվում պահված է միայն մի գրություն, որը տեղեկացնում է այն մասին, թե 1857 թվականին—դժբախտաբար նշված չէ ամիսն ու օրը—նա 1000 ռուբլի ստացավ Նախիջևանի իր գործակիցներից՝ հայկական տպարանի սարքավորում և տառեր գնելու համար[3]։

1857 թ. սեպտեմբերի 24-ին „Молва" թերթում տպագրվեց Մ. Նալբանդյանի հոդվածը «Հյուսիսափայլի» հրատարակության մասին[4]։

Այնուհետև մինչև 1857 թ. վերջերը դադարում են Նալբանդյանի կյանքի մասին մեր ունեցած տեղեկությունները։ 1857 թ. դեկտեմբերի 11-ին Օդեսայից ուղարկված մի նամակում է միայն, որ ումն Հովհաննես Թաթևոս-

---

[1] Գրական թանգարան, Ռ. Պատկանյանի արխիվ, № 270, էջ 17։

[2] Երկերի լիակատար ժողովածու, 4-րդ հատ., էջ 46։

[3] Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթապանակ № 185, վավերագիր 30։

[4] Հայկական ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1954, № 5, էջ 79։

յան նրա մասին հաղորդում է Արել Մխիթարյանին. «Ազնիվ եղբայր մեր ըստ հոգւոյ զգոնամիտ Միքայել Նալբանդեանց պարապի ի բաժնի բժշկական արուեստի ի Մոսկուա, ուրանոր որպէս լսեմ՝ զդերկեամ մի ևս ունի մնալ և ապա՝ բժիշկ»[1]։

Հարց է առաջանում, ուր էր գտնվում, կամ ինչ էր անում Նալբանդյանը համալսարանական արձակուրդների շրջանում՝ 1857 թ. հուլիս—օգոստոս ամիսներին։ Այդ հարցին է հենց, որ պատասխան է տալիս Ի. Պատկանյանի նամակը։

Ի՞նչ մարշրուտ էր ունեցել Նալբանդյանի առաջին արտասահմանյան ուղևորությունը։ Պատկանյանը լռում է այս մասին, բայց որչափ ուղևորությունը կապ էր ունեցել Մոսկվայի հայկական տպարանի սարքավորման խնդրի հետ, պիտի ենթադրել, թե նա կարող էր ուղևորված լինել Վիեննա և մանավանդ Վենետիկ, ուր այդ ժամանակ գտնվում էին հայ խոշոր տպարանները։

Կան տվյալներ, որոնք հավանական են դարձնում այդ ենթադրությունը։

Ավետիք Խաղեզյանը, Նալբանդյանի դպրոցական ընկերը և միաժամանակ նրա անդրանիկ կենսագրողը, հաղորդում էր՝ «1858 թվականի վերջերը Նալբանդյանցը տկարության պատճառով գնաց արտաքս սահմանի (ինչպես տարի մը առաջ էլ գնացել էր) և շրջեցաւ Պոլիս, Փարեզ ու Վիեննա և այս տեղերու հայերուն ծանոթացաւ»[2]։ Փոքր ինչ հետո կենսագրողը նշում է նաև Նալբանդյանի 1860—1862 թվականներին կատարած ուղևորությունը։ Այսպիսով, Խաղեզյանը նշում է Նալբանդյանի երեք ուղևորություն, որոնք հաջորդաբար կատարվել են 1857, 1858 թթ. վերջերը (պիտի լիներ 1859 թ. սկզբները—Ա. Հ.) և 1860—1862 թվականներին։

Հրապարակախոսի հաջորդ կենսագրողը, Մ. Միանսարյանը, գրում է, թե «1856 և 1858 թվերին (Նալբանդյանը) ճանապարհորդեց Եվրոպա և տեսավ Կ. Պոլիս, Վիեննա, Վենետիկ, Փարիզ, Լոնդոն և այլ տեղեր»։ Միանսարյանը հիշում է նաև Հնդկաստան ուղևորվելու կապակցությամբ ձեռնարկված ճանապարհորդությունը, որ գնում է 1861—1862 թթ. ներքո»[3]։

Մ. Տեր-Գրիգորյանը Փարպեցու «Թղթի» թարգմանությանը կցած կենսագրականում գրում է դարձյալ Նալբանդյանի՝ «1858 թ. վերջերը» և մինչև 1859 թ. վերջը դեպի Պոլիս, Վիեննա, Փարիզ կատարած ուղևորության, ինչպես նաև 1860 թ. ձեռնարկած հաջորդ ճանապարհորդության մասին[4]։

Նալբանդյանի «Երկերի» Ն. Նախիջևանի հրատարակությանը կցված կենսագրականը ևս՝ Դ. Սալթիկյանի պատմածները վկայակոչելով, հաղորդում է 1859 թ. Նալբանդյանի և մխիթարյանների Վենետիկում տեղի ունեցած ինչ-որ հանդիպման մասին։

Նալբանդյանի «Ծոցատետրի նկատողությունները» հայտնաբերվելուց հետո, պարզ է միանգամայն, որ 1859 թ. կամ 1860—1862 թվականներին հրա-

---

1 Մատենադարան, Պատկանյանների արխիվ, թղթապանակ № 141, վավերագիր 279։

2 «Մեղու Հայաստանի», 1866, երես 147։

3 Տես «Քնար հայկական», 1867, էջ 520—521։

4 Ղազար Փարպեցու գրած թուղթը, Մ. Պ. Բ., 1868. երես 14։

պարակախոսը չէր եղել ոչ Վիեննայում և ոչ էլ Վենետիկում։ Այնուամենայնիվ, որչափ վերը հիշատակված վկայությունները ելնում են Նալբանդյանի հետ անմիջական շփում ունեցած մարդկանցից՝ պիտի կարծել, որ սրանց հազորդածները ոչ թե մտացածին են, այլ ինչ որ շփոթության արդյունք։ Պատարված իրողություններից շատ հետո արձանագրված այս վկայությունների մեջ նկատելի են նախ թվականների ու ամիսների անստուգություն և ապա՝ տարբեր ուղևորությունների ու մարշրուտների միակցում։ Նման բան հաճախ է լինում։ Բանասիրության մեջ դա կոչվում է՝ դեպքերի կամ փաստերի կոնտամինացիա։ Կարևոր է, որ Խաղեղյանի և Միանսարյանի գրած հնագույն կենսագրականները նշում են Նալբանդյանի ոչ թե երկու, այլ երեք ուղևորություն։ Բացի այդ, բոլոր հին աղբյուրները նշում են Նալբանդյանի Վիեննայում կամ Վենետիկում լինելու փաստը։

Թե մասնավորապես Նալբանդյանը եղել էր Վենետիկում, դրա օգտին գուցե կարելի է բերել հրապարակախոսի թղթերում պահպանված իտալերեն մի նամակ՝ գրված Վենետիկում 1859 թ. հոկտեմբերի 24-ին։ Նամակը հասցեագրված է ումն «թանգագին եղբոր» նրան մտերիմ ինչ որ նկարչուհու կողմից։ «Ես միշտ անհանգստանում եմ քո առողջության մասին, քո թանգագին ծնողների մասին և քո խոսքերից դատելով, թվում է ինձ միշտ, թե քո թշնամիները երբեք չեն դադարում քեզ հալածելուց»,—գրում է նկարչուհին։ Նամակից պարզվում է, որ «թանգագին եղբայրը» ճանաչում է նկարչուհուն շատ վաղուց և ժամանակին եղել էր Վենետիկի նրա արվեստանոցում. նամակի ակնարկներից երևում է, որ առաջին նրա այցելությունը տեղի էր ունեցել ոչ թե 1859 թ. այլ դրանից առաջ։ Հիմա «թանգագին եղբայրը» կարող է մխիթարվել գեթ նրանով, որ ապրում է հարազատ միջավայրում. որքան դժբախտ կլիներ, եթե կապվելով նրա մասին անհանգստացող «քրոջ» հետ, օտար աշխարհում շարունակ զգալու լիներ յուրայինների կարոտը։

Նամակի բովանդակությունը հիմք է տվել ենթադրելու, թե նա ուղղված է Նալբանդյանին։ Եթե ճիշտ է այդ ենթադրությունը, ապա նկարչուհու նամակը պիտի դիտվի որպես նոր մի վկայություն այն մասին, որ 1859 թ. առաջ Նալբանդյանը իսկապես եղել էր Վենետիկում։ Նոր ուժ ստացող այն փաստը, թե Նալբանդյանը 1857 թ. եղել էր Վենետիկում, իր հերթին ուժ է տալիս այն ենթադրության, թե նկարչուհու նամակն իրոք ուղղված է Նալբանդյանին։

Պիտի կարծել, որ երկարատև չի եղել Նալբանդյանի դեգերումը Վենետիկում։ Դա է հենց պատճառը, որ այդ ուղևորությունը հետք չի թողել նրա գրագրությունների մեջ։ Տպարանական գործերն ավարտելուց հետո նա պիտի շտապեր Մոսկվա, որչափ այդ անհրաժեշտ էր «Հյուսիսափայլի» հետ կապված կազմակերպական և գրական աշխատանքներ կատարելու համար։ Վերադարձն անհրաժեշտ էր նաև ուսման տարվա սկզբից համալսարանական դասախոսություններին հետևելու համար։ Պիտի կարծել, որ Նալբանդյանի արտասահմանից Մոսկվա ժամանելու մասին է խոսքը, երբ ձեռագիր իր օրագրություններից մեկում Մոսկվայում ապրող Մսեր Մսերյանը 1857 թ. օգոստոսի 28-ին ներքո--արձանագրում էր. «Նալբանդյանն եկնա»[1],

[1] Տե՛ս Մ. Նալբանդյան, Անտիպ երկեր, երես 744։

Համադրելով Պատկանյանի և Մսերի տված տեղեկությունները՝ կարող ենք նշել, որ Նալբանդյանի արտասահմանյան այդ առաջին ուղևորությունը տեղի էր ունեցել 1857 թ. հուլիսի 23-ի և օգոստոսի 28-ի արանքում։

Նալբանդյանի՝ Վենետիկում արված դիտողությունները պիտի որ ազդած լինեին մխիթարյանների դեմ ուղղված նրա բազմաթիվ հարձակումների վրա։ Եթե խափանված չլիներ 1858 թ. սկսած նրա «Մխիթար և Մխիթարյանք» հոդվածաշարի տպագրությունը, անշուշտ, միջոց պիտի ունենային շատ բան իմանալու նաև հրապարակախոսի վենետիկյան «տեսածների ու լսածների» մասին։ Նույնը (կարող ենք ասել նաև Նալբանդյանի Վիեննայում զեգերելու և տեղական մխիթարյաններին հանդիպած լինելու մասին։

Պիտի կարծել, որ հիմնականում Վիեննայում և Վենետիկում արած իր դիտողություններից էր ելնում Նալբանդյանը, երբ հետագայում «Երկրագործության» էջերում ծանրանում էր «ձկնարյուն ավտորիացիների» բռնատիրության վրա և երկիցս նշում «գեհենապարտ» Հաբսբուրգների դեմ պայքարող Վենետիկի մասին։

Իր ցերմ համակրանքը դեպի ազատասիրաձգ Իտալիան Նալբանդյանն արտահայտել էր դեռևս 1860 թվականին՝ Նեապոլից Սվաճյանին ուղղած նշանավոր իր նամակում, որ ցույց է տալիս, թե որքան դեռ մինչ այդ նա պիտի հետաքրքրված ու մտածած լիներ իտալական շարժման շուրջը։

Միայն բռնի օտարակալության դեմ չէ պայքարում իտալական ժողովուրդը, ասում է նա այդ նամակում, այլև իր ներքին թշնամիների դեմ. Սրանց շարքերում նա նշում էր Իտալիայի ազնվականությունը, որ բռնաբարում է հասարակ ժողովրդի ազատությունն ու իրավունքը և «ուրիշները ազդատացնելով հարստանում է ու տիրապետում է ազգի բանականության վրա»[1]։ Ազնվականությունից ոչ պակաս ճնշում է գործում իտալական ազգի բանականության վրա կաթոլիկ կղերը։ «Այս Հռոմը փորձանք դարձավ մարդկության գլխին,—շարունակում է Նալբանդյանը... Հռոմը ստրկությամբ և բռնակալությամբ հիմնված մինչև այսօր հաստատ կացավ իր սկզբունքին... բայց Իտալիայի ներկա վիճակը, խելքերի ընդհանուր խմորումը վկայում են, թե շուտով կհնչեն Հռոմի ճակատագրական զանգակը»[2]։

Այս տողերը գրելու պահին իտալական բուրժուազիան դեռ չէր խզել իր կապերը ժողովրդական շարժման հետ։ Բուրժուազիայի առաջավոր տարրերը զինակցում էին նրան։

«Բարիբալդիի ետևը,—ասում էր իր նամակում Նալբանդյանը,—կանգնած է հասարակ ժողովուրդը, Վիկտոր Էմանվելի ետևը՝ բուրժուազիան, կամ ինչպես արտահայտվում է հրապարակախոսը՝ «քաղաքացիք, այսինքն՝ միջնակարգ ժողովուրդ»։ «Սրանք երկուսն էլ,—ասում է Նալբանդյանը,—պայքարում են Իտալիայի ազատության համար»։ Հրապարակախոսը թափանցում է զինակիցների միջև եղած «խոշոր տարբերությունը», գիտակցում, որ Իտալիայի ազատագրմանը նրանք մոտենում են «տարբեր սկզբունքներից»[3]։

[1] Երկերի լիակատար ժողովածու, հատ. 4, էջ 83։
[2] Նույն տեղում։
[3] Նույն տեղում։

Եվ ինչ խոսք, որ հայ ազատարաղձ հրապարակախոսի համակրանքը ամբողջովին խոնարհված էր ազատ Իտալիայի համար մաքառող «հասարակ ժողովրդի» ու նրա հերոս զեկավար Գարիբալդիի կողմը։

Սակայն իր բուռն ատելությունը դեպի իտալական ժողովրդի թշնամիները Նալբանդյանն արտահայտել էր դեռևս 1860 թվականից էլ առաջ, 1859 թ. հուլիսին գրած «Իտալացի աղջկա երգում»։ Գործանել Ավստրիան, նվաճել շղթայակապ Իտալիայի ազատությունը՝ այս էր երգի լեյտմոտիվը։

Երբ գրվում էր այդ երգը՝ արդեն կնքված էր իտալական ժողովրդի թիկունքին սուր իջեցնող Վիլլաֆրանկիի դաշնագրությունը։ Նապոլեոն 3-րդը ծվատում էր ազատ Իտալիայի կուրծքը Հարսբուրգների ճանկերում թողնելով Վենետիկն ու նրա շրջանը։ Իտալիայի ազատագրական պայքարը թևակոխում էր ռևոլյուցիոն զարգացման նոր էտապ։ Նալբանդյանը գիտեր այդ պահին, որ միայն իտալական ազատության դեմ չէր ուղղված Վիլլաֆրանկյան դաշնագրությունը. ֆրանսիական բուրժուազիայի բախտախնդիր առաջնորդին հարկավորվել էր այդ դաշնագրությունը՝ նպատակ ունենալով, «արտաքին հաղթություններով ճնշել ու անհետ կացուցանել ներքին ազատությունը ֆրանսիական ազգի մեջ»[1]։ Սակայն Նալբանդյանը համոզված էր, որ ֆրանսիական դեմոկրատիան չի փոխի՝ ազգային իր ազատասիրությունը կայսրության ոսպնաթանի հետ։

Նշանավոր իր երգով Նալբանդյանը ողջունում էր վերսկսվող ազատամարտությունը ոչ միայն այն պատճառով, որ «թշնամուց ոտնակոխ» երկրի զավակն էր նաև ինքը, կամ այն, որ իտալական ռևոլյուցիոներների կանչերը նրան հիշեցնում էին Ռուսաստանում արծարծվող ազատագրական այն մեծ շարժումը, որի մեջ նա նշմարում էր իր ժողովրդի և բախտակից մյուս ժողովուրդների փրկության «մեծ խորհուրդը»։ Նալբանդյանը դրեց մարտաշունչ իր երգը անշուշտ նաև այն պատճառով, որ տակավին դրանից առաջ տեսել ու սիրել էր այն երկիրը, որի ազատության համար մղվում էր գարիբալդիականների պայքարը, ինչպես նաև այն, որ գիտել ու ատել էր այն ռեժիմը, որի կործանման համար մարտնչում էին իտալական հայրենասերները։

[1] Երկերի լիակատար ժողովածու., հատ. 2, էջ 278։